№ 240 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20 1900 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20 № 240

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1901** ԹՒԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 բ., ինն եւ ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. եւ մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շերամապահների ժողովի առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումները Բագուում. Նամակ Նոր-Բայազէտից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բօլգարիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն։

ՇԵՐԱՄԱՊԱՀՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, դեկտեմբերի 17-ին, Թիֆլիսում բացվեց շերամապահների ժողովը, որի մասին մենք յայտնել էինք մեր լրագրում։ Ժողովին մասնակցում են թէ շերամապահներ եւ թէ պաշտօնական անձինք։ Ժողովի ծրագիրը ընդարձակ է, նա ամփոփում է իր մէջ շերամապահութեան զարգացման բազմաթիւ խնդիրներ։

Մենք կասկածում ենք, որ ժողովը կարող լինի լուրջ կերպով քննել իր ծրագրի մէջ նշանակված բոլոր խնդիրները։ Ուստի ցանկալի է, որ գոնէ երկու էական խնդիր գրաւեին առանձին ուշադրութիւն եւ բաւարար լուծում ստանային։ Այդ երկու խնդիրներն են՝ շերամի սերմ մատակարարելը ազգաբնակութեան եւ շերամի ապրանքների տեղափոխութեան էժանացնելը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Բայց այդ բոլորը Նոր Պատմութեան հայի համար դարձաւ արեան գետերով բաժանված անցեալ։ Հայաստանի համար Նոր Պատմութեան դռները բաց անողը Լէնկթիմուրն էր։ Եւ երբ նրա ու նրա նմանների տարածած աւերիւնաների անապատների մէջ նորից չունչ առնել է սկսում մի ստրուկ, ցիրուցան հայութիւն, ամեն ինչ արդէն խորտակված ու փշրված է նրա սրտի եւ յիշողութեան մէջ։ Չը կայ կապ անցեալի հետ, չը կայ մարանչող դասակարգ, որ վառ պահէ ազատասիրական զգացմունքները։ Ամեն ինչ գլուխ է իջեցնում բարբարոսութեան առաջ եւ գալիս են երկարատեւ խաւարն ու վայրենացումը։ Հերոս պատերազմողների փոխարէն բազմանում եւ ժողովրդի ոգին են գրաւում անսպառ համբերութեամբ եւ հեզութեամբ լցված նահատակները, որոնք ամեն տեսակ չարչարանք յանձն են առնում կրօնի համար։ Այդ տեսակ նահատակութիւններն են դառնում ժողովրդական իդէալ, որ հնչում է երգի, աւանդութեան մէջ ոչնչացնում է ամեն տեսակ դիմադրութեան հակացողութիւնը, ապացուցանելով թէ որքան անօգուտ, անտեղի եւ նոյն իսկ աստուածընդդէմ բան է այդ դիմադրութիւնը։

Այսպէս էր հայ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը։ Նրա մի քանի փոքրիկ հատուածները անմատչելի սարերի գլխին շարունակեցին մնալ տեղական կռիւներ ազատութեան համար, բայց այդ լեռնային ոգին, ինչպէս ասացինք, չիջաւ անմատչելի բարձրութիւններից, չը տարածվեց տանջվող բազմութիւնների մէջ։ Եւ ժողովուրդը իր բանաստեղծութեան մէջ մնաց խորթ դիւցազներգութիւններին։ Նոյն իսկ թիւրք ժողովուրդը, չը նայած որ միշտ նուաճող է եղել, միշտ ուրիշներին լացացնող, ստեղծել էր այնպիսի հերոսական պատմուածքներ, որոնց մէջ դրված էր իւրաքանչիւր ուղղահաւատ մուսիւլմանի համար պարտաւորական իդէալ.—հերոսական վէպը ներշնչում էր թիւրքին ատելութիւն դէպի քրիստոնեաները, խրատում էր պինդ պահել այն ամենը, ինչ ձեռք է բերվել զէնքով։ Չը նայած որ այդ իդէալները ընդհանուր մուսիւլմանութեան համար ամեն օր երգում էր իսլամը, թիւրք ժողովուրդը հարկաւոր էր համարել իր սեփական, ազգային ստեղծագործութեամբ էլ ամրացնել այդ բոլորը իբրեւ նուիրական ուխտ։ Իսկ հայը լուռ ու մունջ էր. նա չունէր ցեղական ուխտ, չունէր որոշ անուն կրող թշնամի, այդ թշնամու վերաբերմամբ որ եւ է կարծիք, ծրագիր ու հայեացք...

Դիմենք այժմ ժողովրդական գրաւոր բանաստեղծութիւններին։ XV դարից հայերի մէջ բազմանում են երգասաց հեղինակներ, որոնցից շատերի անունները ու գործերը մնացել են տաղարանների մէջ։ Թէ այդ տաղարանները եւ թէ այն հանգամանքը, որ երգերը մեծ մասամբ աշխարհիկ բովանդակութիւն ունէին, գրվում էին կամ բոլորովին աշխարհաբար, կամ աշխարհաբարին շատ մօտիկ գրաբար լեզուով, բաւական են վկայելու, որ այդ գրաւոր բանաստեղծութիւնը կարելի է ժողովրդական անուանել։ Երգասաց հեղինակները նոյն ժողովրդական աշուղներն էին, այն զանազանութեամբ, որ դրանք գրագէտ էին, ուստի եւ կարողանում էին գրի անցկացնել իրանց հիւսածքները։ Եւ որովհետեւ գրագէտ էր գլխաւորապէս հոգեւորական դասակարգը, ուստի երգասաց հեղինակները մեծ մասամբ հոգեւորականներ էին—վարդապետներ, եպիսկոպոսներ, նոյն իսկ կաթողիկոսներ։

Հայ աշուղական դասակարգը, անկասկած, հին ծագում ունի եւ նշանաւոր դեր է խաղացել ժողովրդի կրթութեան գործում, երբ գրագիտութիւնը չէր տարածված, երբ գաղափարները մի տեղից միւս տեղ տանելու համար միայն այդ թափառական երգիչները գոյութիւն ունէին։ Աւելի հին ժամանակների մասին մենք դատելու նիւթ չունենք։ Բայց գոնէ XV դարից հայ աշուղը աչքի է ընկնում մի յատկութեամբ. դա այն է, որ այդ ժողովրդական երգիչը ազգային ինքնուրոյնութիւն չէ ցոյց տալիս։ Եթէ բանաստեղծութիւնը հայրենիք չունի, եթէ բանաստեղծական թոյլ ընդունակութիւն ունեցող ազգերը պիտի կամայ-ակամայ մուրացկան դառնան—դրա կենդանի օրինակը հայ աշուղն է։ Նա սպասաւորել է արեւելեան բանահիւսութեան, տարածել է պարսկական, թիւրքաց վէպերն ու տաղերը, աւելացրել է դրանց վրա իր սեփական ստեղծագործութիւններն էլ, բայց փոքր ի շատէ ինքնուրոյնութիւն կարողացել է պահպանել միմիայն կրօնական հարցերի մէջ, երբ նրան, իբրեւ քրիստոնեայ երգչի, հարկաւոր էր լինում վէճի բռնվել մահմեդականների հետ։ Մնացած դէպքերում հայ աշուղի ազգութիւնը հոմարեա չէր երեւում։ «Ցաւելու ու ծանր ասելու բան է, ինչպէս հայ մայրն օրօրքն ասելում՝ քունը կոտրելով ու գուրգուրելով մեծացրել է որդուն պարսից ու թուրքերու համար երգիչ», ասում է Ախվերդեանը *)։ Հայ ազգի որ եւ է աւանդութիւն, որ կապ չունենար կրօնական հաւատալիքների հետ, հայ որ եւ է հերոսի գործերի նկարագրութիւնը երբէք չէին ոգեւորում հայ աշուղին։ Նա իր ժողովրդի հարազատ որդին էր...

Այսպիսի անինքնուրոյնութիւնն ու ազգային անտարբերութիւնը յատուկ են եւ երգասաց հեղինակներին։ Դրանց գործերը ամենամեծ մասով ներկայացնում են ողորմելի տափակութիւն, վերին աստիճանի արհեստական նմանողութիւններ, որոնց մէջ տաղտկալի միանմանութեամբ կրկնվում են վարդի ու սոխակի, գինու ու զեղեցկութեան գովասանքները։

Փայլուն հանճարները գաճաճ նմանվողների լէգէօններ են թողնում իրանց ետեւից։ Հաֆիզը, արեւելքի այս ամենախոշոր քնարերգակ բանաստեղծը, իր դիւթող երգերով նըւաճեց ամեն մէկին, որին մատչելի էր նրա լեզուն։ Նրան նմանվում էին շատ չնորհալի եւ անշնորհք բանահիւսներ. նմանվում էին եւ՝ թիւրքերը, նմանվում էին եւ՝ երգելու ընդունակութիւն զգացող հայ վարդապետները։ Տարօրինակ հանգամանք։ Յովհաննէս Թլկուրանցին, որ եղել է Սիսի կաթողիկոս, Գրիգոր Աղթամարցին, որ եղել է Աղթամարի կաթողիկոս, երգել են սէր, կոյսի գեղեցկութիւն։ Բայց ինչ դոյն, զգացմունքի ինչ խորութիւն կարող է ունենալ այդպիսի երգը կուսակրօն հոգեւորականի բերանում, մի դասակարգի, որ անբնական երեւոյթ է կազմում կանանցի մէջ իբրեւ բնական օրէնքների մի միստիկական աղճատում, մի դասակարգի, որ սիրային ըզգացմունքների, ուրախ եւ կենսաթրթիռ հակումների կատարեալ ժխտումն է։ Ուզում ենք ասել, որ սիրահարական, զուտ աշխարհային գործերի մէջ կեղծ էր կուսակրօնի դրութիւնը, իսկ կեղծութիւնից չէ կարող աեկեղծութիւն դուրս գալ։ Հոգեւորական դասը խորթ չէ եղել բանաստեղծական բուռն զգացմունքներին։ Բայց ինչ չրջանի մէջ։—Այնտեղ, ուր Գրիգոր Նարեկացին կամ Ներսէս Շնորհալին ողբեր ու փառաբանութիւններ են հիւսել, այսինքն կրօնական հակացողութիւնների չրջանում։ Իսկ վեղարաւոր սիրահարները տուել են բառակոյտեր, որոնք եթէ մի քիչ վկայում էլ են հեղինակական կարողութեան մասին, բայց ճըշ-

*) «Սայեաթ-Նովա», Մոսկվա, 1852, եր. դ.

Մենք օգտվել ենք առիթներից եւ մի քանի անգամ պարզել ենք, թէ որպիսի հիմնական նշանակութիւն ունի շերամի առողջ սերմի քանակութեան աւելացնելը մեր երկրում։ Մեր տեղական շերամապահների մի մասը սկսել է առողջ սերմ պատրաստել նոյն իսկ մեր երկրում։ Ի հարկէ, պէտք է ամեն միջոց գործ դնել տեղական սերմնահանութիւնը քաջալերելու եւ պաշտպանելու։ Բայց մենք չենք համակրում մեր շերամապահների շրջանում յայտնվող ցանկութեան, որ կառավարութիւնը սահմանէ առանձին մաքս արտասահմանից մեր երկիրը ներմուծվող սերմի համար։ Թող մեր շերամապահները մրցեն արտասահմանեան սերմավաճառների հետ եւ այդ մրցութեան մէջ յաղթական տեղ գրաւեն իրանց պատրաստած սերմի գերազանց յատկութեամբ եւ ոչ թէ մաքսի տուած արտօնութիւններով։ Այդ յաղթութիւնը ձեռք բերելու համար մի կողմից անհրաժեշտ է, որ սերմ գնողը փորձով համոզվի տեղական սերմնահանի պատրաստած սերմի բարձր յատկութեան մէջ։ Միւս կողմից երկրագործութեան մինիստրութիւնը պէտք է նպաստէ, որ շերամապահի ձեռք ընկնող սերմը իսկապէս լաւ հետազօտված լինի եւ նրա տուած վկայականը բոլորովին համապատասխանէ գործնական արդիւնքին։

Միւս կարեւոր հարցը մենք նշանակեցինք շերամի եւ մետաքսի արդիւնքի էժան տեղափոխութիւնը։ Ցիրաւի, միթէ դա օտարոտի մի երեւոյթ չէ, որ մեր երկրի բօժօժը գնում է արտասահման, այնտեղ թել դառնում եւ յետոյ, իբրեւ արտասահմանեան ապրանք, ներմուծվում է Ռուսաստանի մետաքսագործարանները։ Եթէ շերամի եւ մետաքսի տեղափոխութիւնը էժան լինէր, այն ժամանակ մեր բօժօժը կարող էր ձեռնտու գներով ուղարկվել գործարանները եւ այնտեղ ենթարկվել մշակութեան։ Կամ մենք ինքներս մեր երկրում պէտք է լաւ մանարաններ հիմնենք եւ կարողանանք գործարաններին տալ գեղեցիկ պատրաստված թել, կամ եթէ մենք անընդունակ ենք այդ գործը կատարելու, պէտք է կարող լինենք էժան կերպով բօժօժ հասցնել մինչեւ գործարանները եւ այնտեղ նրանից պատրաստել այնպիսի որակութեան թել, ինչպիսին պահանջվում է գործարանների համար։

Մենք հաւատացած ենք, որ կառավարութիւնը կը յարդէ շերամապահների կողմից ներկայացված մի այդպիսի խընդիրք, որով տուած կը լինի մի դիւրութիւն մեր երկրի շերամապահներին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳՈՒՄ

Հայկական բեմը յամառ կերպով ձգտում է տեւողական դրութիւն հաստատելու Բագուում եւ, արդէն ինչպէս յայտնի է, մտել է իր գոյութեան չորրորդ տարին։ Բատ երեւոյթին, այդ պէտք է աջողութիւն համարել։ Բայց սա մի այնպիսի աջողութիւն է, որ իրաւամբ կարող է յիշեցնել Պետրոս Մեծի խօսքերը—«Մի այսպիսի յաղթութիւն եւս, եւ ես կը մնամ առանց բանակի»։ Իմ խօսքերը ամենից լաւ կը հասկանայ դերասանական ընկերութեան գանձապահը։

Մենք մեր անցեալ յօդուածներում շատ առիթ ենք ունեցել կանգ առնելու մի ըստ երեւոյթին անհասկանալի երեւոյթի վրա, թէ ինչպէս եւ Բագուում, ուր կենտրօնացած է մեր համարեա ամբողջ ինտելիգէնցիան եւ նիւթական խնդիրը չունի ուրիշ կենտրոնների սուր բնաւորութիւնը, ուր ընդհակառակը, շատերը լղոզում են ոսկու մէջ,—թատրոնը անընդունակ է առանց խոշոր դէֆիցիտի փակել սեղմը։ Բայց երանի միայն այս երեւոյթը մեզանում լինէր անհասկանալի։ Ինչ առանձին աջողութիւն կարելի է սպասել թատրոնի համար մի մթնոլորտում, ուր նոյն իսկ դրականութիւնը, այն, ինչ իւրաքանչիւր կուլտուրական ազգի

Դրանց գործերը ամենամեծ մասով ներկայացնում են ողորմելի տափակութիւն, վերին աստիճանի արհեստական նմանողութիւններ, որոնց մէջ տաղտկալի միանմանութեամբ կրկնվում են վարդի ու սոխակի, գինու ու զեղեցկութեան գովասանքները։

Փայլուն հանճարները գաճաճ նմանվողների լէգէօններ են թողնում իրանց ետեւից։ Հաֆիզը, արեւելքի այս ամենախոշոր քնարերգակ բանաստեղծը, իր դիւթող երգերով նըւաճեց ամեն մէկին, որին մատչելի էր նրա լեզուն։ Նրան նմանվում էին շատ չնորհալի եւ անշնորհք բանահիւսներ. նմանվում էին եւ՝ թիւրքերը, նմանվում էին եւ՝ երգելու ընդունակութիւն զգացող հայ վարդապետները։ Տարօրինակ հանգամանք։ Յովհաննէս Թլկուրանցին, որ եղել է Սիսի կաթողիկոս, Գրիգոր Աղթամարցին, որ եղել է Աղթամարի կաթողիկոս, երգել են սէր, կոյսի գեղեցկութիւն։ Բայց ինչ դոյն, զգացմունքի ինչ խորութիւն կարող է ունենալ այդպիսի երգը կուսակրօնի հոգեւորականի բերանում, մի դասակարգի, որ անբնական երեւոյթ է կազմում կանանցի մէջ իբրեւ բնական օրէնքների մի միստիկական աղճատում, մի դասակարգի, որ սիրային ըզգացմունքների, ուրախ եւ կենսաթրթիռ հակումների կատարեալ ժխտումն է։ Ուզում ենք ասել, որ սիրահարական, զուտ աշխարհային գործերի մէջ կեղծ էր կուսակրօնի դրութիւնը, իսկ կեղծութիւնից չէ կարող աեկեղծութիւն դուրս գալ։ Հոգեւորական դասը խորթ չէ եղել բանաստեղծական բուռն զգացմունքներին։ Բայց ինչ չրջանի մէջ։—Այնտեղ, ուր Գրիգոր Նարեկացին կամ Ներսէս Շնորհալին ողբեր ու փառաբանութիւններ են հիւսել, այսինքն կրօնական հակացողութիւնների չրջանում։ Իսկ վեղարաւոր սիրահարները տուել են բառակոյտեր, որոնք եթէ մի քիչ վկայում էլ են հեղինակական կարողութեան մասին, բայց ճըշ-

պատիւը եւ պարծանքն է կազմում, կիսամեռ դրութեան հասած՝ հազիւ շնչում է, հեղինակները գլխակոր, արհամարված դեգերում են ինչպէս օտար ժողովրդի մէջ։ Շարունակ միայն լսում են չարչնական ֆրազներ... «Բայց պայմանները, պայմանները...»։ Այո, պայմանները. բայց պայմանների մէջ վատթարագոյնը մեր ցեղային հակումներն են։ Բայց Թողնենք այդ, դա վաղուց սպառված թեմա է։

Այս տարվայ 16-րդ ներկայացումից մենք վերսկսում ենք մեր ընդհատված քննադատութիւնները։ Բայց նախ մի քանի խօսք խմբի այս տարվայ կազմի մասին։ Աւելորդ է ասել, որ խմբի կազմը ոյժերի կողմից փոփոխութեան չէ ենթարկվել։ Նորերի թուում մենք չենք գտնում տիկին Աւետեանին եւ Ցելեկեան քոյրերին, որոնք մի տարի ընդհատելուց վերսկսել են իրանց գործունէութիւնը նոյն բեմի վրա։ Բոլորովին նոր են իբրեւ խմբի անդամներ օրիորդ Զմչկեան եւ պ. Յովհաննիսեան։ Սխալվում է արդեօք օրիորդը իր կոչման մասին, թէ հանգամանքները նրա համար բոլորովին չարաբաստիկ կերպով դասաւորվեցին, որ նրան չէ աջողվում ապացուցանել բեմական ձիրքի նշաններ։ Մենք ընդունում ենք, որ նա բարոյական ծանր ճնշումների ենթարկվեց, որոնց ազդեցութեան ներքոյ կարող էր չփոթվել եւ իսկական ձիրքը։ Բայց այսպէս թէ այնպէս, նա իբրեւ դերասանուհի մինչեւ օրս ոչ մի յոյս չէ ներշնչել եւ նրա փորձերը բեմի վերաբերմամբ կարապի երգի տպաւորութիւն են թողնում։

Անհամեմատ աւելի ցաւալի երեւոյթ է ներկայացնում պ. Յովհաննիսեանի դրութիւնը։ Սիստեմատիքական պատրաստութիւնից յետոյ (գոնէ ըստ վկայականի), որոնք պակվեցին բաւական աջող փորձով անցեալ տարի, թուում էր, թէ մի ցանկալի անդամ պիտի աւելանայ ոյժերի կողմից մեր աղքատ դերասանական կազմին։ Բոլոր ենթադրութիւնները պ. Յովհաննիսեանը օդը ցնդեցրեց։ Այժմ նա հանդիսանում է իբրեւ վերջին անդամներից մէկը։ Մի քանի արտաքին ձեւեր, որ նա իւրացրել է սովորելու ժամանակ, որոնք առաջին անգամ տպաւորութիւն թողեցին, անփոփոխ գործադրում է ինչ տիպ որ ներկայացնելիս լինի, որով արդէն նա սկսել է ծիծաղ յարուցանել միայն։ Դերասանը մի տեսակ չփոթվածի, ցրվածի եւ ճնչվածի տպաւորութիւն է թողնում խաղի ժամանակ։ Վերջնական վճիռ սրա մասին յայտնել դեռ վաղ է, որովհետեւ սրա դերասանական միջոցների մէջ մի կարեւոր գրաւական կայ—անկասկած պաթոս ձայնի մէջ։ Այսպէս, խուժդը մնում է իր հին ոյժերով, եթէ միայն հին կարելի է համարել եւ տիկին Մայուրեանցին, որը միայն մի տարի է, որ ծառայում է բեմին։

Վերոյիշեալ 16-րդ ներկայացման նիւթը կազմում էր մեր բեմի համար մի բոլորովին նոր պիէսա—«Սաֆո» Գրիլպարցերի։ Սա մի անաջող փորձ է—վերարտադրել մի վայրկեան հին կլասիքական աշխարհի ամենահեռաւոր անցեալներից, մի վայրկեան, որ նոյն իսկ հների համար պատած է եղել առասպելական քողով։ Գրիլպարցեր իր դրամայի նիւթ է ընտրել հին աշխարհի մեծահռչակ բանաստեղծուհուն վերաբերված լեգենդան։ Բայի եւրոպական նշանաւոր կլասիքներից, ոչ մի փորձ այս ուղղութեամբ դեռ աջողութեամբ չէ պակվել։ Հին հեռաւոր կեանքի եւ այն տեսակ բարդ եւ նուրբ կեանքի, ինչպիսին յունականն է եղել, հասկացողութիւնները, ընկերավարական պայմանները, տիրող գործոնները վերակենդանացնել սովորական տաղանդի հնարաւորութիւնից դուրս է։ Դրա համար հարկաւոր են այնպիսի տիտաններ, ինչպէս Շէքսպիր եւ Գեօթէ։ Հին աշխարհի կեանքի տեղ Գրիլպարցերի պիէսայում կան միայն կլասիքական անուններ, տերմիններ եւ բառեր։ Պիէսայի ամեն մի կտորում կարելի է տեսնել նրա կեղծութիւնը։ Սաֆոի բոլոր ստրուկները, ծառաները նուրբ արուեստագէտներ են եւ նրա տաղանդի գիտակցական երկրպագուներ։ Գրիլպարցեր մոռացել է, որ արուեստը, գիտութիւնը միայն ազատ եւ տիրապետող դասակարգի առաւելութիւններ էին կազմում։ Ինչպէս արժան է կեղծ կլասիքական պիէսային, ամեն բան յարմարեցրած է գլխաւոր ինտրիգայի պահանջին։ Ժամանակակից կեանքի ոչ մի մոտիվ չէ լսվում պիէսայում։ Բոլորը զբաղված են Սաֆոի սիրահարական ինտրիգայով եւ նրա ընթացքից կախված է նրանց վճռականութիւնը եւ գործողութիւնները, կարծես ուրիշ ոչ մի զբաղմունք չունեն, եւ դրանք սովորական մարդիկ չեն, կաշկանդված կեանքի տիրապետող պայմաններով, որոնց գոյութեան մասին ակնարկ անգամ չը կայ։ Ինքը Սաֆոն եւ պիէսայի հերոսը—Ֆաւոն, բայի սիրահարութիւնը եւ երգը, ուրիշ ոչ մի զբաղմունք չունեն. կեանքը իր միւս հոգսերով դրանց չէ շփոթում բոլորովին եւ չէ դնում իր ճակատագրական կնիքը նրանց բաղդի վրա, ինչպէս եղել է եւ է մարդու գոյութեան օրից։ Իսկ Ֆաւոնի հոգերանութիւնը միայն գրքում կարող է գոյութիւն ունենալ եւ ոչ իրականութեան մէջ։ Սաստիկ սիրահարված Սաֆոի վրա, հիացած նրա տաղանդով, նա վայրկենաբար զրաւվում է առաջին պատահած դեղեցիկ ստրկուհով, առանց մի որ եւ է ներքին դրամայի, ինչպէս երեխան մի խաղալիքից իսկոյն անցնում է միւս խաղալիքին. մինչդեռ հեղինակը նրան ներկայացնում է իբրեւ նուրբ արուեստագէտ, տաղանդ գնահատող։ Նոյնպէս վայրկենաբար նրանում յարգանքը դէպի Սաֆոն փոխվում է ատելութեան, ատելութիւնը յարգանքի եւ հիացման, կախված Սաֆոի յարաբերութիւնից դէպի նրա նոր կապը. նա ոչ մի վիշտ, ոչ մի խայթոց, չէ զգում, որ իր վարմունքով մահացու հարված է հասցնում իր հայրենիքի առաջին կնոջ, որը արժանացրել է նրան իր սիրուն։

Ի լրումն անհեթեթութիւնների, հեղինակը Սաֆոին վերագրում է քրիստոնէական ներողամտութեան 18-երորդ դարի հումանիստական զգացմունք։ Մինչդեռ հին աշխարհի համեմատաբար աւելի նոր ժամանակի ամենալուսամիտ ներկայացուցիչը—Սոկրատէս առում է. «Իմ կարծիքով, ամենալաւ մարդը նա է, ով ամենից շատ բարիք է անում իր բարեկամին, ամենից շատ չարիք հասցնում իր թշնամուն»։ Իսկ Սաֆոն,—առասպելական ժամանակի ներկայացուցիչը, իր դաւաճան սիրահարին բռնելուց յետոյ, ներում է նրա յանցանքը, նրան միացնում է նրա նոր սիրածի հետ եւ իր կեանքը կնքում անձնասպանութեամբ։ Սա ամենալաւ ապացոյց է, թէ որքան է ըմբռնել Գրիլպարցեր իր նկարագրած ժամանակի ոգին։

Սաֆոի դերը կատարում էր տիկին Սիրանոյշ։ Հայկական բեմի անթառամ վարդը շարունակում է ստեղծագործել իր տաղանդի սովորական զօրութեամբ։ Բայց սա էլ ազատ չէ անհեթեթ նկատողութիւններից։ Նորերս քննադատներից մէկը նկատել էր, որ իբր տիկնոջ տարիները իրանց զգալ են տալիս։ Քննադատը աւելի շուտով իր երեւակայութեան, քան թէ իրականութեան մէջ գտած կը լինի այդ փաստը։ Տիկինը միայն այժմ հասունացած եւ լրացած տաղանդ է եւ աւելի արդիւնաւոր, քան թէ մի այլ ժամանակ։ Քննադատը մոռացել է, որ ռուսաց բեմի նշանաւոր աստղերը, Երմոլովա, Սավինա, Ֆեդոտովա այժմ են հասել ամենամեծ զօրութեան։

Սաֆոի դերը տիկինը կատարեց շատ աջող, չեշտելով նրա բնաւորութեան բանաստեղծական եւ քնքոյշ կողմերը։ Աչքի էր ընկնում իր խաղով տիկին Մայուրեանց՝ ստրկուհի Մելիտտայի դերում։ Շնորհալի դերասանուհին դեռ մի տարի հազիւ է լրացել, որ իրան նուիրել է բեմին, որպիսի ժամանակամիջոցում նա ստիպված էր դեռ իւրացնել մայրենի լեզուն, եւ ահա արդէն կարեւոր ոյժերի կարգումն է եւ տիկին Սիրանոյշից յետոյ առաջին տեղն է բռնում։ Նրա խաղի վրա նկատվում է ռուսաց չիօլայի ամենալաւ տրադիցիաների ազդեցութիւնը—բնական խաղ, անկեղծ տօն, առանց չինծու էֆէկտների։

Իզուր էր պ. Աբէլեանը ճգնում տիպ ստեղծել Ֆաւոնի անբնական անձնաւորութիւնից։ Տաղանդաւոր դերասանը, որը տիպ ստեղծելու մէջ սկսել է վիրտուօզութեան հասնել, արեց ինչ որ կարող էր, բայց չէր կարող լրացնել հեղինակի պակասութիւնները։ Մնացած դերերը երկրորդական էին եւ չափազանցութեան մէջ չենք ընկնի, եթէ ասենք, բոլորն էլ միակերպ։

Յ. Սաղաթելեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Դեկտեմբերի 12-ին

Դեկտեմբերի 3-ին, քաղաքային վարչութեան տան մէջ հասարակական ժողով կար։ Ի միջի այլ հարցերի լուծելի էին երկու գլխաւոր խնդիրներ. 1) քաղաքի հողերի վրա հարկ դնելու հարցը եւ 2) քաղաքային ռուսաց ուսումնարանի չինութեան խնդիրը։ Առաջին հարցը առաջնակարգ տեղ է բռնում մեր քաղաքի հասարակութեան համար, քանի որ Նոր-Բայազէտի ժողովրդի մեծամասնութիւնը պարապում է հողագործութեամբ եւ քաղաքը կարելի է համարել զուտ հողագործական քաղաք, որովհետեւ ամեն տուն իր հողաբաժինն ունի, ամեն չունչ՝ իր հողի հասոյթը, իսկ քաղաքը տիրապետում է աւելի քան 10,000 դեսեատին հողի՝ թէ խոտատեղեր, թէ արօտներ եւ թէ վարատեղեր։

Երկու երեք տարի առաջ վէճ բացվեց քաղաքի հողերը սեփականութիւն ճանաչելու համար, բայց քաղաքը բողոք բարձրացրեց եւ գործը դեռ եւս գտնվում է կառավարութեան բարձր ատեանում։ Անկասկած գործը կը վճռվի յօգուտ քաղաքի եւ քաղաքի իրաւունքները գուցէ պաշտպանված լինեն, քանի որ 1850 թ-ից, երբ Քավառ անուանված աւանը փոխվում է Նոր-Բայազէտ քաղաքի, բոլոր այդ հողերը բաշխված են եղել քաղաքին, որ եւ տիրապետում է մինչեւ այսօր՝ առանց մի որ եւ է հողային հարկ վճարելու։ Ուրեմն ամբողջ 50 տարի տիրելուց եւ այդքան ժամանակ անցնելուց յետոյ՝ նորից հարց է բարձրացնվում քաղաքապատկան հողերը արքունական ճանաչելու մասին։

Որքան յիշում ենք, նախանցեալ տարի կառավարութեան կողմից վճռված էր մեր քաղաքային հողաբաժինները ճանաչել իբրեւ սեփականութիւն եւ մեչչանների (հասարակութեան) ձեռքից առնել ու յանձնել քաղաքային վարչութեան իրաւասութեան, որը իր կողմից՝ իբրեւ լիազօր կալուածատէր՝ կարող էր բոլոր հողաբաժինները կապալով տալ զանազան անձանց։ Մայուրեանցին, որը միայն մի տարի է, որ ծառայում է բեմին։

Վերոյիշեալ 16-րդ ներկայացման նիւթը կազմում էր մեր բեմի համար մի բոլորովին նոր պիէսա—«Սաֆո» Գրիլպարցերի։ Սա մի անաջող փորձ է—վերարտադրել մի վայրկեան հին կլասիքական աշխարհի ամենահեռաւոր անցեալներից, մի վայրկեան, որ նոյն իսկ հների համար պատած է եղել առասպելական քողով։ Գրիլպարցեր իր դրամայի նիւթ է ընտրել հին աշխարհի մեծահռչակ բանաստեղծուհուն վերաբերված լեգենդան։ Բայի եւրոպական նշանաւոր կլասիքներից, ոչ մի փորձ այս ուղղութեամբ դեռ աջողութեամբ չէ պակվել։ Հին հեռաւոր կեանքի եւ այն տեսակ բարդ եւ նուրբ կեանքի, ինչպիսին յունականն է եղել, հասկացողութիւնները, ընկերավարական պայմանները, տիրող գործոնները վերակենդանացնել սովորական տաղանդի հնարաւորութիւնից դուրս է։ Դրա համար հարկաւոր են այնպիսի տիտաններ, ինչպէս Շէքսպիր եւ Գեօթէ։ Հին աշխարհի կեանքի տեղ Գրիլպարցերի պիէսայում կան միայն կլասիքական անուններ, տերմիններ եւ բառեր։ Պիէսայի ամեն մի կտորում կարելի է տեսնել նրա կեղծութիւնը։ Սաֆոի բոլոր ստրուկները, ծառաները նուրբ արուեստագէտներ են եւ նրա տաղանդի գիտակցական երկրպագուներ։ Գրիլպարցեր մոռացել է, որ արուեստը, գիտութիւնը միայն ազատ եւ տիրապետող դասակարգի առաւելութիւններ էին կազմում։ Ինչպէս արժան է կեղծ կլասիքական պիէսային, ամեն բան յարմարեցրած է գլխաւոր ինտրիգայի պահանջին։ Ժամանակակից կեանքի ոչ մի մոտիվ չէ լսվում պիէսայում։ Բոլորը զբաղված են Սաֆոի սիրահարական ինտրիգայով եւ նրա ընթացքից կախված է նրանց վճռականութիւնը եւ գործողութիւնները, կարծես ուրիշ ոչ մի զբաղմունք չունեն, եւ դրանք սովորական մարդիկ չեն, կաշկանդված կեանքի տիրապետող պայմաններով, որոնց գոյութեան մասին ակնարկ անգամ չը կայ։ Ինքը Սաֆոն եւ պիէսայի հերոսը—Ֆաւոն, բայի սիրահարութիւնը եւ երգը, ուրիշ ոչ մի զբաղմունք չունեն. կեանքը իր միւս հոգսերով դրանց չէ շփոթում բոլորովին եւ չէ դնում իր ճակատագրական կնիքը նրանց բաղդի վրա, ինչպէս եղել է եւ է մարդու գոյութեան օրից։ Իսկ Ֆաւոնի հոգերանութիւնը միայն գրքում կարող է գոյութիւն ունենալ եւ ոչ իրականութեան մէջ։ Սաստիկ սիրահարված Սաֆոի վրա, հիացած նրա տաղանդով, նա վայրկենաբար զրաւվում է առաջին պատահած դեղեցիկ ստրկուհով, առանց մի որ եւ է ներքին դրամայի, ինչպէս երեխան մի խաղալիքից իսկոյն անցնում է միւս խաղալիքին. մինչդեռ հեղինակը նրան ներկայացնում է իբրեւ նուրբ արուեստագէտ, տաղանդ գնահատող։ Նոյնպէս վայրկենաբար նրանում յարգանքը դէպի Սաֆոն փոխվում է ատելութեան, ատելութիւնը յարգանքի եւ հիացման, կախված Սաֆոի յարաբերութիւնից դէպի նրա նոր կապը. նա ոչ մի վիշտ, ոչ մի խայթոց, չէ զգում, որ իր վարմունքով մահացու հարված է հասցնում իր հայրենիքի առաջին կնոջ, որը արժանացրել է նրան իր սիրուն։

Ի լրումն անհեթեթութիւնների, հեղինակը Սաֆոին վերագրում է քրիստոնէական ներողամտութեան 18-երորդ դարի հումանիստական զգացմունք։ Մինչդեռ հին աշխարհի համեմատաբար աւելի նոր ժամանակի ամենալուսամիտ ներկայացուցիչը—Սոկրատէս ասում է. «Իմ կարծիքով, ամենալաւ մարդը նա է, ով ամենից շատ բարիք է անում իր բարեկամին, ամենից շատ չարիք հասցնում իր թշնամուն»։ Իսկ Սաֆոն,—առասպելական ժամանակի ներկայացուցիչը, իր դաւաճան սիրահարին բռնելուց յետոյ, ներում է նրա յանցանքը, նրան միացնում է նրա նոր սիրածի հետ եւ իր կեանքը կնքում անձնասպանութեամբ։ Սա ամենալաւ ապացոյց է, թէ որքան է ըմբռնել Գրիլպարցեր իր նկարագրած ժամանակի ոգին։

Սաֆոի դերը կատարում էր տիկին Սիրանոյշ։ Հայկական բեմի անթառամ վարդը շարունակում է ստեղծագործել իր տաղանդի սովորական զօրութեամբ։ Բայց սա էլ ազատ չէ անհեթեթ նկատողութիւններից։ Նորերս քննադատներից մէկը նկատել էր, որ իբր տիկնոջ տարիները իրանց զգալ են տալիս։ Քննադատը աւելի շուտով իր երեւակայութեան, քան թէ իրականութեան մէջ գտած կը լինի այդ փաստը։ Տիկինը միայն այժմ հասունացած եւ լրացած տաղանդ է եւ աւելի արդիւնաւոր, քան թէ մի այլ ժամանակ։ Քննադատը մոռացել է, որ ռուսաց բեմի նշանաւոր աստղերը, Երմոլովա, Սավինա, Ֆեդոտովա այժմ են հասել ամենամեծ զօրութեան։

Սաֆոի դերը տիկինը կատարեց շատ աջող, շեշտելով նրա բնաւորութեան բանաստեղծական եւ քնքոյշ կողմերը։ Աչքի էր ընկնում իր խաղով տիկին Մայուրեանց՝ ստրկուհի Մելիտտայի դերում։ Շնորհալի դերասանուհին դեռ մի տարի հազիւ է լրացել, որ իրան նուիրել է բեմին, որպիսի ժամանակամիջոցում նա ստիպված էր դեռ իւրացնել մայրենի լեզուն, եւ ահա արդէն կարեւոր ոյժերի կարգումն է եւ տիկին Սիրանոյշից յետոյ առաջին տեղն է բռնում։ Նրա խաղի վրա նկատվում է ռուսաց չիօլայի ամենալաւ տրադիցիաների ազդեցութիւնը—բնական խաղ, անկեղծ տօն, առանց չինծու էֆէկտների։

Իզուր էր պ. Աբէլեանը ճգնում տիպ ստեղծել Ֆաւոնի անբնական անձնաւորութիւնից։ Տաղանդաւոր դերասանը, որը տիպ ստեղծելու մէջ սկսել է վիրտուօզութեան հասնել, արեց ինչ որ կարող էր, բայց չէր կարող լրացնել հեղինակի պակասութիւնները։ Մնացած դերերը երկրորդական էին եւ չափազանցութեան մէջ չենք ընկնի, եթէ ասենք, բոլորն էլ միակերպ։

Յ. Սաղաթելեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Դեկտեմբերի 12-ին

Դեկտեմբերի 3-ին, քաղաքային վարչութեան տան մէջ հասարակական ժողով կար։ Ի միջի այլ հարցերի լուծելի էին երկու գլխաւոր խնդիրներ. 1) քաղաքի հողերի վրա հարկ դնելու հարցը եւ 2) քաղաքային ռուսաց ուսումնարանի չինութեան խնդիրը։ Առաջին հարցը առաջնակարգ տեղ է բռնում մեր քաղաքի հասարակութեան համար, քանի որ Նոր-Բայազէտի ժողովրդի մեծամասնութիւնը պարապում է հողագործութեամբ եւ քաղաքը կարելի է համարել զուտ հողագործական քաղաք, որովհետեւ ամեն տուն իր հողաբաժինն ունի, ամեն չունչ՝ իր հողի հասոյթը, իսկ քաղաքը տիրապետում է աւելի քան 10,000 դեսեատին հողի՝ թէ խոտատեղեր, թէ արօտներ եւ թէ վարատեղեր։

Երկու երեք տարի առաջ վէճ բացվեց քաղաքի հողերը սեփականութիւն ճանաչելու համար, բայց քաղաքը բողոք բարձրացրեց եւ գործը դեռ եւս գտնվում է կառավարութեան բարձր ատեանում։ Անկասկած գործը կը վճռվի յօգուտ քաղաքի եւ քաղաքի իրաւունքները գուցէ պաշտպանված լինեն, քանի որ 1850 թ-ից, երբ Քավառ անուանված աւանը փոխվում է Նոր-Բայազէտ քաղաքի, բոլոր այդ հողերը բաշխված են եղել քաղաքին, որ եւ տիրապետում է մինչեւ այսօր՝ առանց մի որ եւ է հողային հարկ վճարելու։ Ուրեմն ամբողջ 50 տարի տիրելուց եւ այդքան ժամանակ անցնելուց յետոյ՝ նորից հարց է բարձրացնվում քաղաքապատկան հողերը արքունական ճանաչելու մասին։

Որքան յիշում ենք, նախանցեալ տարի կառավարութեան կողմից վճռված էր մեր քաղաքային հողաբաժինները ճանաչել իբրեւ սեփականութիւն եւ մեչչանների (հասարակութեան) ձեռքից առնել ու յանձնել քաղաքային վարչութեան իրաւասութեան, որը իր կողմից՝ իբրեւ լիազօր կալուածատէր՝ կարող էր բոլոր հողաբաժինները կապալով տալ զանազան անձանց։

մարիտ բանաստեղծական արժանաւորութիւններ, ի հարկէ, չեն ներկայացնում։ Նոյն իսկ լեզուի կողմից էլ անմշակ ու խակ են այդ երգերը. գրաբարը խառն գաւառաբարբառի եւ օտար, գլխաւորապէս, ի հարկէ, պարսկերէն բառերի հետ—այսպիսի լեզուն չէր կարող ազդել, յուզել, պահվել երկար ժամանակ։

Այսքան ողորմելի էր ազգային ինքնաճանաչութեան եւ ինքնուրոյնութեան արտայայտութիւնը։ Եւ մենք, ի հարկէ, բոլորովին զուր վաստակած կը լինէինք, եթէ միամտութիւն ունենայինք որոնել այդ բանաստեղծութիւնների մէջ ազգային որ եւ է գաղափար, որ եւ է պատմական կամ ժամանակակից փաստ, որ բլբուլին, վարդին ու բահարին չը վերաբերվէր, այլ եւ կացութեան, կեանքին։

Գրականութիւնը մի ազգի հոգին է։ Մենք շատ անգամ տեսանք, որ նոյն իսկ պատմագրական աշխատութիւնների մէջ մոռացված էր ազգի անցեալը։ Ամեն ինչ կամ ոգը էր, կամ նահատակութիւնների նկարագրութիւն։

Եւ սակայն հայ ազգի առջեւ էլ դրված էր քաղաքական վերածնութեան նոյն անհրաժեշտութիւնը, որ զգում էր յոյնը, սլաւոնը։ Կար մի ժամանակ, որ հայն էլ սպասում էր թէ կը գան եւ իրան էլ կազատեն։ Մենք տեսանք, որ երեք կաթողիկոսներ զանազան ժամանակ մըտածել են հայերին էլ մտցնել այն ազգերի թւի մէջ, որոնց Եւրոպան պատրաստվում էր ազատել։ Դրա համար նրանք նախ եւ առաջ համաձայնվում էին կրօնակցական միութիւն հաստատել արեւմտեան աշխարհի հետ։ Քանի որ ծրագրվող խաչակիր արշաւանքների հոգին Հռոմն էր, անկարելի էր, որ հայերը, մնալով Հռոմի թշնամի, իրաւունք ունենային սպասելու թէ կաթոլիկութիւնը, առանց որ եւ է փոխարինութեան, ձեռք կը տար եւ ոտքի կը կանգնեցնէր նրանց։ Բայց երբ եւրոպական քաղաքականութիւնը ստացաւ այնպիսի ընթացք, որ մահմեդական լուծի տակ ճնչվածներին ցոյց էր տալիս սեփական ջանքերով ազատվելու ճակատագրական անհրաժեշտութիւնը—այլ եւս բաւական չէր կրօնական, նոյն իսկ ցեղային ազգակցութիւնը։ Եւ Յակոբ կաթողիկոսը, եթէ նոյն իսկ Հռոմ էլ հասնէր, պիտի զգար, որ այլ եւս չի վերադառնայ այն ժամանակը, երբ քրիստոնէութիւնը, լոկ քրիստոնէութեան համար, սրբազան պատերազմ էր հրատարակում իսլամի դէմ։

Գաղափարները թեւաւոր են, նրանք թռչում են երկրից երկիր։ Եթէ պաւլիկեան աղանդը Հայաստանից անցաւ Բոլգարիա եւ այնտեղից Արեւմտեան Եւրոպա, ուրիշ ազգերի մէջ պատրաստված գաղափարներն էլ կարող էին անցնել Հայաստան։ Եւրոպական արքունիքներին դիմումներ անելը եւ սեփական միջոցներով ազատարար շարժումներ ստեղծելը օրթոդոքս երկիրների մէջ սահմանափակված չը մնայ։ Հայերի մէջ էլ երեւացին մի եւ նոյն միջոցների անհրաժեշտութիւնը զգացող անհատներ, թէեւ ազգի ամբողջութեան տրամադրութիւնը հող չունէր պատրաստած այդ տեսակ գործողութիւնների համար։ Ժամանակը յանկարծակի է բերում ազգերը, բաց անելով նրանց առաջ գործելու ստիպողական անհրաժեշտութիւնը։ Այդպիսի մի ժամանակ էր XVII դարի վերջին քառորդը։

Թիւրքիայի եւ Աւստրիայի պատերազմները այդ ժամանակ աւելի տեւողական, յամառ բնաւորութիւն ստացան։ Քրիստոնեայ աշխարհը այժմ մաքառում էր վտահութեամբ. Աւստրիան, Լեհաստանը եւ Վենետիկը յարձակողական դաշնակցութիւն կազմեցին։ Այժմ այլ եւս ահարկու Սելիմներն ու Սիւլէյմանները չէին թիւրքաց զօրքերի առաջնորդները. այժմ ամենքի համար անհերքելի իրողութիւն էր, որ Օսմանի դահը խախուտ է, քայքայվում է։

1683 թւականին թիւրք զօրքերը պաշարեցին Վիեննան։ Բայց այստեղ նրանց համար պատրաստված էր մի սոսկալի թակարդ։ Լեհական թագաւոր Եան Սոբէսկի յարձակում գործեց օսմանեան բանակի վրա եւ փառաւոր յաղթութիւն տարաւ. յաղթվածները անկարգ փախան, թողնելով իրանց բանակը, զէնքերը յաղթողների ձեռքին։ Այդ սարսափելի պարտութիւնը ահագին տպաւորութիւն թողեց Եւրոպայում. երեք պետութիւնների դաշնակցութիւնը պաշտպանողական դիրքից դուրս գալով, յարձակողական դիրք բռնեց եւ սկսեց արշաւանքներ ասիական բռնակալութեան դէմ։

Յաջորդ տարին (1684) աւստրիական մի դեսպանութիւն գնաց Մոսկվա՝ հրաւիրելու ռուսներին, որ մտնեն դաշնակցութեան մէջ։ Դեսպան բարօն Բլիւմբերգ արտասանեց մի նշանաւոր ճառ, որի մէջ պատկերացրեց Եւրոպայի տրամադրութիւնը եւ ընդհանուր կարծիքները։ Նա առաջինն էր, որ Թիւրքիայի դրութիւնը նմանեցրեց մի անբուժելի հիւանդ մարդու դրութեան,—մի անուն, որ մինչեւ այժմ էլ պահպանել է իր գոյութիւնը։ Ահա ինչ էր ասում Բլիւմբերգ այդ «հիւանդ մարդու» մասին.

«Օսմանեան պետութեան մեռելանման դէմքը եւ նրա այն ուժասպառութիւնը, որ յատուկ է միայն մահվան դատապարտված մարմնին եւ որ չուտով պիտի դիակնանայ, կատարեալ քայքայման նախակարապետներն են։ Վիեննայի պարտութեամբ նա զրկվեց ոյժից եւ կարողութիւնից. նրան տիրած ահը ոչնչացրել է նրա աշխուժութիւնը. ամօթալի փախուստի արագութիւնը վերջնականապէս խորտակել է նրան. հասել է նրա համար կործանման եւ քայքայման ժամը։ Թիւրքիան ճնչված է սեփական ծանրութեան տակ եւ ոյժ է գործ դնում ազատվել, ցնցումների ենթարկելով իր ներքին կազմուածքը, ազատվել այն ամենից, ինչով ծանրաբեռնված է նրա ստամոքսը, այն ստամոքսը, որ լցված է երկրի կողոպտած հարստութիւններով ընտանեւորված իշխանութիւններով... Ամբողջ Յունաստանը եւ Ասիան սպասում են ձեզ... Սառցակոյտը արդէն ճեղքվել է։ Առիւծը արդէն պատրաստվում է արծիւների կերակուր դառնալ, սուլթանական սուրը բթացել է։ Հաւատացնում եմ ձեզ, որ ներկայ սուլթանը մի պառաւ կնիկ է, որ չը գիտէ մանել, այլ գիտէ միայն լաց լինել» *)։

Դեսպանի այս խօսքերը հաստատում էին այն դէպքերը, որոնք տեղի ունեցան դրանից յետոյ։ Մի կողմից Աւստրիան, միւս կողմից Վենետիկը հարուածում էին օսմանեան վիշապը, կտորներ էին խլում նրանից։ Ու տաղնապի մէջ էր թաթարական իսլամի ահաւոր ներկայացուցիչը։ Ճիշտ է, նա էլ մի մի ցոյց էր տալիս իր նախկին ձիրանները, յետ էր խլում իր կորցրած պատառները, բայց այդ աջողութիւնները ժամանակաւոր էին եւ չէին կարողանում փոխել իրերի դրութիւնը,—այն, որ յաղթողը, անդադար առաջ գնացողը քրիստոնէութիւնն է։ Շուտով աւստրիական դաշնակցութեան մէջ մտաւ եւ Ռուսաստանը։

Այդ միահամուռ ջանքերը, այդ յաղթական գործողութիւնները յոյների նոր, փայլուն ճառագայթներ տարածեցին յոյն եւ սլաւոն ժողովուրդների մէջ։ Նրանք ոտքի կանգնեցին եւ կանչում էին հաւատակից ու ցեղակից ռուսներին առաջ տանել ազատարար արշաւանքները։ Երուսաղէմից, Սերբիայից եւ այլ տեղերից բարձրաստիճան հոգեւորականների նամակներ էին թռչում Մոսկվա։ «Այլ եւս այսպիսի յարմար ժամանակ չէք գտնելու», գրում էր Երուսաղէմի պատրիարք Դոսիֆէյ **)։ Սկսվեց ընդհանուր շարժում։ Մոլդավիան եւ Վալախիան բանակցութիւններ էին վարում Ռուսաստանի հետ, հաստատ խոստումներ էին ստանում նրանից։

(Կը շարունակվի)

*) «Русская Старина» ամսագիր, 1878, № 7, եր. 446—448։

**) Жигаревъ т. I, եր. 102։

ձինքներին կամ հիմնարկութիւններին։ Իսկ այդ դէպքում անչուշտ քաղաքի հողագործ հասարակութիւնը կը զրկուէր իր հողեհասոյթից։ Այդ պատճառով մեչչանների ժողովը, նախկին հարկային տեսուչ պ. Դ. Սելիվանովի խորհրդակցութեամբ, բողոք տուեց այդ վճռի դէմ, պատճառ բռնելով այն հանգամանքը, որ ժողովրդի բոլոր դասակարգերը, որոնք անխիտր պարապում են հողագործութեամբ, կարող են կորցնել իրանց հողաբաժինները, երբ այդ հողերը քաղաքի սեփականութիւն դառնան։ Ահա այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով եւ մեչչանների խնդիրքը յարգված լինելու համար, առ այժմ քաղաքային հողերը մնում են հասարակական տրամադրութեան տակ եւ այդ հիման վրա այս օրերս կառավարութեան կողմից, տեղական հարկային տեսուչ պ. Ա. Գլուխարիովի մէջոցով 6,400 ր. տարեկան հարկ է նշանակված քաղաքի հողերի վրա՝ մինչեւ հողային վէճի վերջանալը, եւ մի ամիս ժամանակ է տրված՝ բողոք ներկայացնելու։ Ուստի այդ պատճառով կայացաւ դեկտեմբերի 3-ին վերոյիշեալ հասարակական ժողովը, որը ընտրեց 3 հոգի իբրեւ հաւատարմատարներ՝ պ.պ. Գ. Արծրունուն, Կ. Տէր-Իսահակեանցին եւ Ս. Տէր-Գրիգորեանցին, որոնք քաղաքի անունից պէտք է խնդրագիր ներկայացնեն Երեւանի պ. նահանգապետի դիւանատունը՝ գործը շարունակելու համար։

Երկրորդ հարցը, որ վերաբերում էր ուսումնարանի շինութեան, կայանում է հետեւեալում։ Մեր քաղաքը ռուսաց ուսումնարանի շինութեան եւ տեսչի բնակարանի համար քրէհ է վճարում տարեկան 720 ր. եւ որովհետեւ քաղաքը արքունական դրամատանը 25,000 ր. փող ունի, այդ պատճառով քաղաքի հասարակութիւնը մտադիր է խնդիրքով 5—8000 ր. դումար դուրս բերել դրամատնից եւ իր սեփական շինութիւն կառուցանել՝ ռուսաց ուսումնարանը զետեղելու համար։ Իսկ այդ դէպքում քաղաքը պարտաւորվում է տարեկան 1000 ր. նպաստ տալ ուսումնարանին, որպէս զի երկդասեան ուսումնարանը փոխարկվի երեք դասարանանի եւ ընդունվեն նորից էլ աւելի թիով աշակերտներ, քանի որ այժմ աշակերտների թիւը շատ սահմանափակ է՝ տեղ չը լինելու համար։ Միւս կողմից՝ ռուսաց ուսումնարանի պ. տեսուչը հարց է դրել ուսումնարանը իր տեղից փոխադրել նախկին հայոց ուսումնարանի շէնքում, որը այժմ դատարկ է մնում եւ որը գանվում է կառավարութեան տրամադրութեան տակ, թէեւ այդ առիթով հոգեւոր իշխանութիւնը բողոք է բարձրացրել՝ ուսումնարանի շէնքը հայոց եկեղեցու սեփականութիւն լինելու վերաբերմամբ։ Սակայն քանի որ հայոց ուսումնարանի շինութեան մասին վիճաբանութիւն կայ, այդ պատճառով ժողովը եկաւ այն որոշման, որ խնդրամատոյց լինի կառավարութեան նոր, սեփական շինութիւն ունենալու ուսումնարանի համար՝ օգտվելով այն դումարից, որը առանց գործադրութեան մնում է արքունի դրամատնումում։ Շատ ցանկալի կը լիներ, եթէ յարգվէր մեր քաղաքի հասարակութեան խնդիրքը կառավարութեան կողմից եւ մեր աղքատիկ քաղաքը մասամբ թեթեւացած լիներ իր առանց այն էլ ծանր եւ աւելորդ ծախսերից։

Գ. Սինանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» խմբագրութիւնը երէկ, երեքշաբթի, դեկտեմբերի 19-ին, Գրիգոր Արծրունու գերեզմանի վրա կատարել տուեց հոգեհանդիսատ նրա մահվան ութերորդ տարեդարձի առիթով։

—

Մեզ հաղորդում են, որ դեկտեմբերի 29-ին, ուրբաթ օր, երեկոյեան Թիֆլիսի նահանգապետի բնակարանում տեղի կունենայ երկրաշարժից վնասվածներին օգնող գլխաւոր կոմիտեի նիստը, որ պէտք է քննութեան առնի կատարված գործերը եւ ծրագրէ իր ապագայ գործունէութիւնը։

—

Ռուս ինժեներների մի խումբ, ինժեներ Սախանսկու ղեկավարութեամբ, այս տարվայ ընթացքում հետազօտութիւններ էր կատարում Թաւրիզ-Թէհրան-Զանկոյ երկաթուղային գծի շինութեան վերաբերմամբ։ Այժմ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, այդ աշխատութիւններն արդէն վերջացած են եւ ապագայ երկաթուղու նախագիծը ու նախահաշիւն արդէն կազմված են։

—

Թիֆլիսի քաղաքային դումայի դեկտեմբերի 18-ի նիստում մերժեց Թիֆլիսում հասցէների տուն եւ պարտաւորաբար դռնապաններ պահելու առաջարկութիւնը։

—

Կովկասեան բժիշկների երկրորդ համաժողովի կոմիտեն խնդրում է մեզ հաղորդել, որ Կովկասեան բժիշկների երկրորդ համաժողովը, ներքին գործերի մինիստրի թոյլտուութեամբ, կը կայանայ ոչ առաջիկայ տարվայ ապրիլ ամսին, ինչպէս ենթադրվում էր առաջ, այլ նոյն տարվայ սեպտեմբերի վերջին։

—

Երկրագործութեան դեպարտամենտի նորերում հրատարակած «Գիւղատնտեսական ընկերութիւնների ցանկը» գրքից երեւում է, որ մինչեւ ներկայ տարվայ հոկտեմբերի 1-ը ամբողջ Ռուսաստանում գիւղատնտեսական ընկերութիւնների, ինչպէս նաեւ նրանց բաժանմունքների թիւը հասնում էր 449-ի, որոնցից 276-ը զբաղվում են գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերով, իսկ 173—առանձին-առանձին ճիւղերով։ Կովկասում գոյութիւն ունեն գիւղատնտեսական 16 ընկերութիւններ եւ բաժանմունքներ—Կովկասեան կայսերական գիւղատնտեսական ընկերութիւնը եւ նրա բաժինները Գանձակում, Քութայիսում եւ Երեւանում, Կուբանի տնտեսական ընկերութիւնը, Սուխումի գիւղատնտեսական ընկերութիւնը, գիւղատնտեսութեան եւ գիւղատնտեսական արդիւնաբերութեան Թերեքի ընկերութիւնը, ռուսական կայսերական այգեգործական ընկերութեան Կովկասեան բաժանմունքը, Մոսկվայի կայսերական գիւղատնտեսական ընկերութեան ոչխարաբուծական կոմիտեն, ռուսաց կայսերական թռչնապահական ընկերութեան Կովկասեան բաժանմունքը, թռչնապահական-գիւղատնտեսական ընկերութեան Եկատերինոդարի բաժանմունքը, նոյն ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքը, մեղուապահների ընկերակցութիւնը Թեմիր-Խան-Շուրայում, ձկնաբուծութեան եւ ձկնորսութեան ռուսաց կայսերական ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքը, թռչնապահական ռուսական ընկերութեան Քութայիսի բաժանմունքը եւ նոյն ընկերութեան բաժանմունքը Թելաւում։

—

Պետերբուրգում, ինչպէս հաղորդում են լրագիրները, նոր տարվանից կը սկսի հրատարակվել մի մեծ ամենօրեայ լրագիր «Русская Газета» անունով, որին կաշխատակցեն մայրաքաղաքի յայտնի լրագրական ոյժերը։

—

ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 3-ին կայացած երէցփոխական ընտրութիւնը մեր թեմի առաջնորդից բեկված լինելով՝ կարգադրված էր նոր ընտրութիւն անել։ Երկրորդ անգամին ընտրութիւնը կատարվեց դեկտեմբերի 10-ին։ Այս անգամ էլ դարձեալ երէցփոխ ընտրվեց իրաւաբանութեան կանդիդատ պ. Ց. Քուշնարեան։ Երէցփոխական ընտրութիւնը վերջանալուց յետոյ, պ. Ց. Քուշնարեանը ծխականների ընդհանուր ժողովին առաջարկեց նախկին երէցփոխ պ. Ս. Շչեգրինին իր վեցամեայ արդիւնաւոր ծառայութեան համար շնորհակալութիւն յայտնել։ Պարոնի առաջարկութիւնը հաւանութիւն գտաւ ժողովում։ Որոշվեց դեկտեմբերի 25-ին, նախկին երէցփոխի անուանակոչութեան օրը, մի պատգամաւորութիւն ուղարկել, մատուցանելով նրան տեղիս հայ համայնքի ստորագրութեամբ մի ուղերձ»։

—

ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՑԻՑ մեզ գրում են. «Այս վերջին տարիներս մեր եւ շրջակայ ժողովրդի դրութիւնը գնալով վատացաւ։ Քանի դեռ երկաթուղին չէր եկել մեր կողմերը եւ ճանապարհները բաց էին, երկրագործ գիւղացին եթէ հողից օգուտ չէր ստանում, գոնէ մի տայլ փայտ էր տանում Ալէքսանդրոպոլ կամ սայլապանութեամբ էր պարապում եւ մի կերպ փող էր աշխատում, որով իր ընտանիքի պահաստութիւններն էր հոգում։ Բայց ահա քանի տարի է, երկաթուղին եկել է եւ աշխատանքի բոլոր ճանապարհները փակել, այնպէս որ գիւղացին հնարաւորութիւն չունի սայլապանութեամբ անգամ պարապելու։ Ահա քանի տարի է մեր ժողովուրդը իր յոյսը դրել է հողի վրա, բայց երկրագործութիւնն էլ չէ արդարացնում նրա յոյսերը։ Ուղիղ է, հացի բերքը այս տարի այնքան առատ էր, որ շատերը խոստովանում էին, թէ այսպիսի առատ տարի տեսած չեն իրանք։ Բայց ժողովրդի յոյսը ապարդիւն անցաւ. մայիսի վերջերից մինչեւ հոկտեմբերի վերջը սկսեց անընդհատ անձրեւ տեղալ։ Խեղճ գիւղացին անասունների խոտ անգամ չը կարողացաւ հաւաքել, որովհետեւ ցօրենի մեծ մասը մնալով դաշտերում՝ հոտեց եւ փչացաւ։ Հաւաքած ցօրենն էլ այնպէս սեւացած է, որի հետ եթէ Ռուսաստանի ալիւր չեն խառնում, չէ ուտվում. ամենքն էլ այժմեանից սկսել են ալիւր առնել եւ պէտք է առնեն մինչեւ առաջիկայ օգոստոս ամիսը. ուրեմն պէտք է երեւակայել, թէ ինչ կը լինի մեր ժողովրդի դրութիւնը, ինչով նա պէտք է հաց առնէ, քանի որ աշխատութեան ճանապարհները փակված են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՑԻՑ

—

Ֆիլիպօպոլ, նոյեմբերի 28-ին

Հեռագիրը վաղուց ձեզ հաղորդած կը լինի ռումինական դատարանի արձակած վճիռները բոլգար ահաբեկիչների մասին։ Պէտք է ասած, որ այդ վճիռները մեծ յուզում առաջ չը բերին Բոլգարիայում, բայց որովհետեւ դատապարտութիւնների հարցը կարող է երկու դրացի երկիրների մէջ անհաղթ բարդութիւնների պատճառ դառնալ, ուստի աւելորդ չեմ համարում մի քանի տեղեկութիւններով հարցը լուսաբանել։

Որ Ռումինիայում մի քանի ապանութիւններ եղան բոլգարների կողմից, դա զուտ ճշմարտութիւն է. բայց թէ դրանք կատարվել են մակեդոնական կոմիտէի վճռով, դա չապացուցվեց մինչեւ վերջը եւ դատապարտվածները, բացի մէկից, բացարձակ յայտարարեցին, թէ իրանք իրանց ձեռներէցութեամբ պատժել են հայրենիքի դաւաճաններին, առանց որ եւ է մարմնի կամ անձի թելադրութեան։ Իսկ թէ ինչու նախնական քննութիւնների ժամանակ ամենքը եւ վերջին անգամ միայն մէկը «խոստովանութիւններ» արին, դա շատ պարզ բացատրվում է այն դժոխային տանջանքներով, որ դրած դրին ռումին իշխանութիւնները իրանց ցանկացածը ասել տալու համար. մեքենաներով գանգը սեղմել, ցրտի մէջ մերկ նստեցնել *) եւ այլ այսպիսի սոսկալի բռնութիւններ, որոնք կարող են պատիւ բերել միայն թիւրքերին։ Եւ այժմ զարմանալի չէ, որ թիւրք, ռումին, գերմանացի հանանիշ անուններ են համարվում։

Ռումինական այս վերջին դատապարտութիւնները անհասկանալի կը մնան, եթէ մարդ չը թափանցէ պատճառների մէջ եւ այնտեղ չը նկատէ մարդկային եսի ու նախանձի դաւարումները։ Ռումինական դատարանը, ծառայելով քաղաքականութեան, նպատակ ունի լուծել Մակեդոնիայի ինքնավարութեան համար կազմված մարմինը եւ ընդմիշտ ոչնչացնել մակեդոնական հարցը։ Հէնց այդ նպատակով է, որ կատարված ոճիրներին ահագին նշանակութիւն տուին, հնարեցին Կարլ Թագաւորի կեանքի դէմ դաւադրական մտադրութիւն եւ առանց փաստերի մեղաւոր հռչակեցին Սարաֆովին եւ իր ընկերներին։ Պէտք է ուշադրութիւնից չը վրիպեցնել եւ այն լուրերը, որ վերջերս թիւրք իշխանութիւնները սկսեցին տարածել, թէ մակեդոնացի բոլգարներ դաւադրութիւն սարքել են սուլթանի դէմ։ Երկու վեհապետների կեանքի դէմ այս դաւադրութիւնները բոլորն էլ շինծու են եւ որոշ նպատակով հնարված, որպէս զի անուանարկ անեն մակեդոնացիներին եւ նրանց քաջայայտը օրվայ հարց չինեն Եւրոպայի մէջ. արդէն աւստրո-ունգարական մի քանի կարեւոր թերթեր բոլգար կառավարութիւնից պահանջում են մակեդոնական կոմիտէի ոչնչացումը, իսկ ռումինական թերթերը ուղղակի զրպարտում են բոլգարներին։

Ռումինիան չունենալով որ եւ է աղօտ յոյս իր երկու ուժեղ դրացիների հաշիւին ընդարձակվելու, միակ ակնկալութիւնը դրած է մանուկ Բոլգարիայի կործանման վրա, իսկ եթէ դա չէ կարելի, գոնէ չը թողնել, որ նա ուռճանայ եւ ընդարձակվի։ Այդպիսի գեղեցիկ մտադրութիւններ ունենալուց յետոյ, անբնական էր, որ թիւրք եւ ռումին գիւանագէտների միջեւ սերտ յարաբերութիւններ չը հաստատվէին. եւ արդէն ռումինացիները, ազնիւ յատկութիւններից ընդհանրապէս զուրկ լինելով, դարձան թիւրքից էլ վատ թիւրք, արտաքսեցին ապատան փնտռող թիւրքահայերին եւ այս անգամ էլ սարքեցին մակեդոնացիների դատապարտութիւնը եւ օկսան թիւրքական սիստեմով հալածել ռումինաբնակ բոլգարներին։

Թէեւ բոլգարները գովելի անտարբերութեամբ վերաբերվում են ռումինացիների հանած իրարանցումին, բայց արդեօք մի եւ նոյն անտարբերութիւնը պէտք կարողանան պահել, երբ ռումինական կառավարութիւնը պաշտօնապէս պահանջէ բոլգարաբնակ դատապարտվածների յանձնումը կամ պատժումը։ Ցոռտեանները ասում են, որ երկու փոքրիկ պետութիւնների ընդհարումը անխուսափելի է։ յարաբերութիւնները այնքան լարված են, որ ուշ կամ կանուխ պատերազմը միայն պիտի կարենայ վերջ դնել ծագած հարցերին. սակայն այն օրը աղետաբեր պիտի լինի երկու կողմերին էլ։ Թէ Ռումինիան եւ թէ Բոլգարիան անտեսական նախանձելի վիճակ չունեն, երկուսի ժողովուրդներն էլ աղքատութեան մէջ տառապում են, առետրական հրապարակը ուղղակի ճգնաժամի ենթարկված է. պատերազմը տնտեսական վերջին հարուածը պիտի տայ երկու իշխանութիւններին. յաղթող, թէ յաղթվող պիտի մատնվեն այնպիսի յուսահատ կացութեան, որից դիւրաւ չը պիտի կարողանան ազատվել։

Թիւրքի ուղածն էլ գա է. նա որքան թշնամի է նորաբողբոջ Բոլգարիային, այնքան էլ ատում է դարաւոր ոսոխ Ռումինիային. Թիւրքը լաւ հասկանում է Ռումինիայի ներկայ թիւրքասէր քաղաքականութեան ոգին. նրա համար հաւասարապէս ցանկալի է երկուսին էլ տկարացումը։

Ռումինական դիւանագէտները պիտի կարողանան իրանց չար նախանձին ասպարէզ չը տալ եւ պատերազմի ծուղակը չընկնել. այդ է ապատում նրանցից լուսաւոր մարդկութիւնը եւ այդ է պահանջում հէնց իրանց իսկական շահը։

Ս. Միսակեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«La Fronde» հաղորդում է, որ նորերս Պարիզում փաստաբանների թիւն է ընդունվել եւ փաստաբանական երդումը տուել երկրորդ փաստաբանուհին Ժրանսիայում—տիկին Բալաշօվսկա-Պոտիից յետոյ—օրիորդ Շօվէն։

—Անգլիական «Truth» ամսագիրը, որ իր տեղեկութիւնները քաղում է պաշտօնական եւ պալատական շրջաններից, հաղորդում է, թէ լորդ Բօսերտսին, Անգլիա հանելուց յետոյ, կը շնորհվի տոհմական կոմսութեան տիտղոս, 50,000 ֆունտ ստերլինգ (500,000 ր.) կենսաթոշակ եւ Կապի շքանշանը։ Այս շքանշանը տրվում է միայն հաղուագիւտ դէպքերում եւ զինուորական բացառիկ ծառայութիւնների համար. անգլիական գեներալներից ոչ մէկը, մինչեւ անգամ լորդ Ռոբերտս, այժմ չունեն Կապի շքանշանը։ Կեմբրիջի դուքսը, որին տրված է այդ շքանշանը, ստացել է ոչ պատերազմական քաջագործութիւնների համար, այլ որպէս արքայական տան պրինց։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 դեկտեմբերի

ԿԱՊՇՏԱԴՏ։ Ուրբաթ օրը հրաժան տրվեց ձերբակալելու ափրիկանդերական վերջին մինիստրութեան անդամ Տիւուստէրին՝ Գրաֆֆրենեատում նրա արտասանած յեղափոխական ճառի համար։

ՊԵԿԻՆ։ Զինայիները ընդունեցին պետութիւնների յայտագրի բոլոր պայմանները եւ այժմ ուղարկում են պաշտօնական յայտարարութիւն նրանց ընդունելու մասին յատուկ սուրհանդակի միջոցով ու խնդրում են, որ բանակցութիւնները անյապաղ սկսվեն եւ պատերազմական գործողութիւնները դադարեցնվեն։

ՇԱՆԳՀԱՑ։ Լի-Խունգ-Զանգ հեռագրում է Շէնին, թէ չինական կառավարութիւնը լիազօրութիւն է տուել նրան եւ Ցինին ստորագրելու խաղաղութեան ժամանակաւոր դաշնագիրը պետութիւնների յայտագրի պայմաններով։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հաղորդում է, թէ Հէլվէցիայի, որ ամուր գիրք է երկաթուղային գծի վրա Մախաղօրայի եւ Լէյդէնբուրգի մէջ տեղում, բրիտանական պահակակէտերը երէկ առաւօտեան գրաւված են բօէրներից եւ այդ ժամանակ սպանված ու վիրաւորված են 50 անգլիացիներ եւ 200 հոգի էլ գերի են առնված։ Գնդապետ Կիտչեներ հաղորդում է, թէ քայլ առ քայլ հետեւում է թշնամուն եւ թէ Հէլվէցիայի յետ առնելը կատարվում է այն օգնական զօրքի միջոցով, որ ստացվել է Բէլֆաստից։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէր հաղորդում է, թէ դրութիւնը Կապի գաղթականութեան մէջ քիչ է փոխվել։ Դէպի գաղթականութիւնը ներս խուժած արեւելեան զօրաբաժինը, ըստ երեւոյթին, բաժանվեց մանր զօրախմբերի, իսկ արեւմտեանը առաջ է գնում դէպի Կարնարվօն, հալածվելով քայլ առ քայլ Տօրնիկրօֆտից։ Ցբէնչ գրաւեց Վէնտէրսդորպ։ Կլէմենտս հաղորդում է, թէ Բուստէնբուրգի ճանապարհին

*) Մի կասկածված հայ անձամբ ենթարկվել է յիշեալ տանջանքներին եւ ազատ արձակվել։

հանդիպեց զիմադրութեան։ Դէպի արեւելք տանող երկաթուղային գիծը Պանի մօտ պայթեցրած է եւ այսօր առաւօտեան Սանդերտոնի մօտ, ոչ հեռու Վալ կայարանից, գնացքը բռնվեց։ Ուայտի զօրաբաժինը հասաւ Սենեկալ։ Նոկս եւ Բոյս չեն թոյլ տալիս Դէվէտին անցնելու դէպի հարաւ։

ԲԵՐԼԻՆ։ Վալդերզէէ հաղորդում է Պեկինից, թէ դէպի հարաւ փախած զօրքերը ենթարկվեցին հալածանքի մինչեւ Խոկիէն, որ մօտ 160 կիլոմետր հեռու է Պեկինից՝ նրանից դէպի հարաւ արեւմուտք. այնտեղից խառնակ դրութեամբ նրանք փախան դէպի հարաւ։

Գրիւբէրի զօրաբաժինը Լինանչէնի մօտ, Պաօտինֆուից դէպի արեւելք, գտաւ ահագին քանակութեամբ ռազմամթերք—կրուպպի արդաձիգ թնդանօթներ, Մաքսիմի թնդանօթներ, հրացաններ, փորուածքների համար կարեւոր նիւթեղէն, հեռագրաթելի իրեղէններ եւ պաքսիմաթ, որ թողել էին այնտեղ Լուտայից փախած զօրքերը։

Պեկին։ Զինական լիազօրները չափազանց զարմացած են, որ հրաման ստացան ընդունելու պատութիւնների միացեալ յայտագրի պայմանները։ Լի-Խունգ-Զանգ եւ Ցին չէին կարծում, թէ հայրվէր համաձայնեցնել արքունիքը զիջողութեան տան օրից առաջ։ Կայսրի հրամանները հակվում են դէպի այն, որ լիազօրները ընդունեն յայտագիրը ամբողջութեամբ, բայց ջանքեր գործ դնեն առանձին առանձին պայմանների վրա, որպէս զի նրանք հնար եղածին չափ ամենանպաստաւոր ուղղութիւն ստանան Չինաստանի համար, մանաւանդ դեսպանական պահակախմբերի թիւը սահմանափակելու, նրանց տեղաւորման, երկաթուղային գծի երկայնութեամբ զինուորական պահակակէտերի սահմանափակման վերաբերմամբ եւ. վերջապէս խնդրեն դաշնակիցներին չը կործանել մարտկոցները, այլ միայն զինաթափ անել նրանց։ Լի-Խունգ-Զանգի առողջութիւնը վատ է եւ կասկածելի է, որ կարելի լինի մտածել մի այլ բան, քան լիազօրութիւնների յանձնելը Ցինին, մինչեւ որ մի ուրիշ լիազօր նշանակվի։ Լի-Խունգ-Զանգ այսօր պատգարակով բերվեց Ցինի մօտ, որի հետ նա երկար խորհրդակցեց։ Ցին կանչեց սպանիական դեսպանին եւ խնդրեց հաղորդել միւս դեսպաններին, թէ կայսրից հրաման է ստացված ստորագրելու պատութիւնների յայտագիրը՝ եւ ցանկութիւն է յայտնված, որ պատերազմական արշաւանքները դադարեցնվեն։

ԲԵՐԼԻՆ։ Պրուսական ակցիոներական կալուածական բանկի գրաւթղթերի տէրերի ժողովը միաձայն լիազօրութիւն տուեց իր ներկայացուցիչներին վճարել բոլոր տոկոսները, որոնց ժամանակամիջոցը լրանում է յունվարի 2-ին եւ ապրիլի 1-ին (ն. տոմարով) այն հանգամանքից յետոյ, երբ հաստատվեց պարզվեց, որ բանկի գործերի դրութիւնը աւելի մխիթարական է, քան կարծվում էր։

19 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правит. Вѣстникъ» հաղորդում է, որ «Վիլդէ Տամատավ» չոգենաւը 13-րդ հրացանաձիգ գնդի էշելոնով եւ 4-րդ թնդանօթաձիգ դիվիզիայի առաջին բատարէյով եկաւ Եալտա դեկտեմբերի 17-ին երեկոյեան, իսկ դեկտեմբերի 19-ին, առաւօտեան 10 ժամին տեղի ունեցաւ էշելոնի Բարձրագոյն զօրահանդէսը Լիվադիայում։ Զօրահանդէսից յետոյ զինուորների համար պատրաստված էր ճաշ լիվադիական զօրանոցներում, ուր բարեհաճեց ժամանել Թագաւոր Կայսրը։ Նորին Մեծութիւնը բարձրացնելով բաժակը, բարեհաճեց ասել. «Ես երջանիկ եմ տեսնելով ձեզ, եղբայրներ, այդպէս զուարթ ու քաջառողջ, որ վերադարձել էք ծանր արշաւանքից յետոյ եւ հեռաւոր ճանապարհից. Ես խժում եմ ամրակուռ չորրորդ հրացանաձիգ փառաւոր ամբողջ բրիգադայի, 13-րդ հրացանաձիգ գնդի եւ չորրորդ թնդանօթաձիգ դիվիզիայի բատարէյների կենացը եւ ցանկանում եմ նրանց բարգաւաճումը»։ Հեռանալու ժամանակ Թագաւոր Կայսրը բարեհաճեց ասել. «Կրկին անգամ շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ, եղբայրներ, ձեր քաջ ծառայութեան համար. ցանկանում եմ ձեզ առողջ վերադառնալ հայրենիք»։ 12½ ժամից Լիվադիայի պալատում տեղի ունեցաւ Բարձրագոյն նախաճաշ, որին արժանացան հրաւիրվելու էշելոնի օֆիցէրները։ Ժամը 4-ին Նորին Մեծութիւնը ժամանեց Եալտայի նաւահանգիստը, ուր կանգնած էր «Տամատավ» չոգենաւը էշելոնով։ Թագաւոր Կայսրը բարձրացաւ նաւի տախտակամածը, ուր կանգնած էր էշելոնը եւ բարեհաճեց իր ձեռքով բաժանել ֆէլդֆէբէլներին եւ աւագ ունտէր-օֆիցէրներին զինուորական շքանշաններ։

ԼՕՆԴՕՆ։ Պեկինից «Times»-ին ուղարկված հեռագրի մէջ խիստ զանգատներ են յայտնված գերմանացիների վարմունքների դէմ Զժիլիում. խիստ պատիժներ առանց զանազանելու մեղաւորը անմեղից, ճնշումներ, բազմաթիւ անօգուտ զոհեր, գրաւական տուգանքներ առնել խաղաղ քաղաքներում եւ տեղական իշխանութիւնների հեղինակութեան ոչնչացում—այս բոլորը խառնակութիւնների պատճառ դարձան, փոխանակ նրանց առաջն առնելու։ Թղթակիցը երկու օրինակ է բերում գերմանացիների նենգաւորութեան եւ վրէժխնդրութեան անմեղ անձերից։ «Սրանով—ասում է նա—վնասվում է օտարերկրացիների համարումը, որոնք ամեն տեղ նշանակվում են, որպէս Վալդերզէէի գլխաւոր հրամանատարութեան տակ գտնվողներ, թէպէտ եւ ոչ մի բրիտանական օֆիցէր մուտք չունի նրա զինուորական խորհրդի մէջ»։

ՊԱՐԻԶ։ Քննիչ դատարանը Կիւինէի գործի վերաբերմամբ պատասխանեց, թէ մեղադրվողը չը պէտք է արձակվի ծառայութիւնից կարգապահութիւնը խախտելու համար։ Դատավճիռը կայացրած է չորս ձայնով ընդդէմ մէկի։ Միւս կողմից լսվում է, թէ Անդրէ կարգադրել է բանտարկել Կիւինէին բերդում 60 օրով։

Պեկին։ Որովհետեւ Պեկինի շրջակայքում եւ Պեկին—Պաօտինֆու երկաթուղային գծի վրա նկատված է զօրքերի եւ «Մեծ-բռունցքների» հաւախմբումն, ուստի ֆրանսիական եւ գերմանական պահակները կրկնապատկված են՝ անակնկալ դէպքերից խուսափելու համար։ Գնդապետ Գիլիոյին եւ նրա հետ գտնվող 500 զինուորներին Ցինդինֆուի մօտ սպառնում է մի քանի հազար մարդուց բաղկացած մի չինական զօրաբաժին։ Գեներալ Բալիւ ճանապարհ ընկաւ փրկելու Գիլիոյին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հորեքշաբթի, դեկտեմբերի 20-ին
տեղի կունենայ
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հորեքշաբթի, դեկտեմբերի 26-ին
նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Տոմսակներ տրվում են պ.պ. անդամներին եւ կանդիդատներին, համաձայն կանոնադրութեան 58-րորդ յօդուածի, ժողովարանի գրասենեակում առաւօտեան ժամի 11—2 եւ 7—12 երեկոյեան։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, դեկտեմբերի 23-ին, նշանակված է պ.պ. անդամների
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
կանդիդատների քուէարկութեան եւ զանազան հարցերի քննութեան համար։ (20 եւ 23) 1—2

ՄԻ ՃԵՄԱՐԱՆԱՒԱՐՏ
ցանկանում է
հայոց լեզուի ժամանաւոր դասեր ունենալ։ Կարելի է դիմել բերանացի կամ գրաւոր կերպով Жандармская ул. № 28, М. Арутинянцу. 1—1

ՀՐԱՒԷՐ
Ամսոյս 24-ին, կիրակի առաւօտեան 11 ժամին, Կոմիսիայի Նորաշէն ս. Աստուածածնի եկեղեցում լինելու է ծխականների ժողով՝ նախկին երէցփոխի հաշիւները զննելու, ուստի սրանով հրաւիրվում են յիշեալ եկեղեցու ծխերը՝ ներկայ լինել ժողովին մասնակցելու։
Գործակալ բ. ժամի Թիֆլիսի՝
1—1 Գրիգոր ա. քահ. Մանդակունի

ՏԱԼԻՍ ԵՄ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ
ՀԱՅԵՐԷՆԻ եւ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
նաեւ գերմաներէնի
Հասցէ՝ ՇԱՆԹ
Фрейлинская 14, первый этажъ. 5—8

Շարունակվում է
ՊԱՏԵՐԱԶԱՐԴ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
VII եւ VIII գրքերի
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Երկու գրքի բաժանորդագինն է 3 բուբլի։
Կարելի է ստանալ նաեւ նախորդ գրքերը բաժանորդագրական գնով։
Դիմել՝ Ерванду Лалаянцъ, Саперная 5 կամ Семенарія Нерсисянъ. Тифлисъ.
(ե. ո.) 7—15

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋԻԿԱՑ 1901 ԹՎԱԿԱՆԻ

„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳՐԻ
Խմբագրութեան և մշտական աշխատակիցների նոր կազմով.
Խմբագրութեան անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ եւ ԼԷՕ։

«Մուրճ» ամսագիրն ունենալու է հետեւեալ բաժինները. 1) Վէպեր, պատմուածքներ, զրոյցներ. 2) Բանաստեղծութիւններ. 3) Նորութիւններ ռուսաց եւ արտասահմանեան գրականութիւնից. 4) Քննադատութիւն եւ գրախօսութիւն. 5) Ներքին քաղաքական. 6) Արտաքին տեսութիւն. 7) Նամակներ արտասահմանից. 8) Գաւառական կեանք. 9) Տնտեսական հարցեր. 10) Գիտութեան, գեղարուեստի եւ տեխնիկայի աշխարհից. 11) Յայտարարութիւններ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ.

Ռուսաստանում տարեկան 10 բուբլի, արտասահման՝ 30 ֆրանկ
» կէս տարվան 6 » » 18 »
» 1 ամսվան 1 » » 3 »

«Մուրճ» ամսագրին կարելի է գրվել. ԹԻՖԼԻՍՈՒՄ—խմբագրատանը (Երեւանեան հրապարակ, տուն տ. Խարազեանի)։ Խմբագրատունը բաց է առաւօտեան ժամը 10-ից—2-ը, բացի կիրակի եւ տօն օրերից։

ԿԱՑՍՐՈՒԹԵԱՆ ԱՑԼ ՏԵՂԵՐԻՑ պէտք է դիմել. Тифлисъ, редакція журнала «Мурчъ».
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ՝ Tiflis, Rédaction de la revue «Mourtch».

3—3 Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր՝ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆՑ

„ՇՂԹԱՅ“
ՆԱԻԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ.պ. փայատէրերի, որ Նոր բաց թողած փայերը կարելի է ստանալ 13-ից մինչեւ 23-ն դեկտեմբերի, ընկերութեան գրասենեակում, Երեւանեան հրապարակ, տուն տիկին Խարազեանի, գաւթում։ Նոր փայեր ստանալու համար փայատէրերը պէտք է մոցնեն փայի արժողութեան 15% եւ ներկայացնեն իրանց հին փայերը։
3—5

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեհատութեան։
Բ) Առեւտրական թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1901 թւի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն դրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեւսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 բ. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ (ե. հ. չ.) 12—20

ԲՕՓՕՓԻ ՑԵԼՈՒԼԵԱՐՆԻ ՍԵՐՄ
Բաղդադի առաջնակարգ եւ սպիտակ տեսակ
Պարսկօրեան դրութեամբ պատրաստված
հսկողութեամբ
ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԵԱՆԻ
Առաջին կարգի վկայեալ մասնագէտ Պրուսայի Կայսերական Շերամապահական վարժարանէն։

Երկար տարիներէ ի վեր Թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուած եւ ծանօթ ֆիրմա ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԵԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պարսկօրեան դրութեամբ ընտրված Պաղտատի տեսակ սպիտակ հունտէրէն յատկապէս եւ մասնաւոր խնամօք պատրաստել տուած, եւ որոնցմէ առաջին պարտիան արդէն հասած եւ յանձնած եմք Շերամապահական կայարանն քննութեան համար։

Ամէն անոնք՝ որք կը փափաքին դիւրամատչելի գիներով լաւ ապրանք գնել եւ ապահով ըլլալ հունտերու տեսակին վրա, թող հաճին դիմել մանրամասնութեանց համար Մայսուրաձէ եւ Խոջափարուխով քարավանսարան № 16—17, **Ա. Կ. ԱՐՄԷՆ** եւ ընկ. գրասենեակը։
(ե. հ. չ. 20—30

23—52 М. 9,730 (չ)

Սարգիս Վ. Աբրահամեան
Հասցէ. ՍՕԼՕԼԱԿ, Գանձակայեա փող. տ. Թամամշեվի, № 26, բն. № 9.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ
1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ շոգենաւային հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Պարտաւորեալների օրէնքները։
5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։
ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ ՍԿՍՎԵԼՈՒ Է ՅՈՒՆՎԱՐԻ 15-Ի
Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ (չ. ո. չ.) 13—25

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Декабря 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.